№ 2. Յունվարի 18. — 1875 — Յունվարի 18. № 2.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ՝

Յարեւեան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանողները պիտի դիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թէհրանում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (սրծրուեու առն և պ. Եատուրեանցի խանութում։

# ՄՇԱԿ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՐԻՆԵԼՈՒԹԻՒՆ՝

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպվումեն հայերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսիարէն, գերմաներէն և թուրքերէն։

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց օրագրութեան դործը։—Ներքին տեսութիւն։ Թիֆլիսի ջրանցքի խնդիր։ Նամակ Մեծ-Շուլավերից։ Նամակ Նուխուց։ Նիրքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ընդհանուր տեսութիւնը։ Նապոլէոն III (կենսագրութիւն)։ — Խառն լուրեր։ — Առեւտրական։ — Յայտարարութիւններ։—Բանասիրական։

## ՀԱՅՈՑ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

### I

Մինչև որ ինքն հայոց ժողովուրդը քնած էր բարոյապէս և մտաւորապէս, անկարելի էր ապաւել որ ցրված ազգի այն տեղերում, ուր որ աւելի բազմաթիւ էր հայ տարրը, ծագէր մտաւոր կեանքը...։ Այն տեղերը, ուր հայերը խիտ կերպով էին բնակվում, ուր նոքա գաղթականներ չէին, այլ բնիկներ,—այն տեղերը երկար ժամանակ զրկված լինելով օտար տարրերի հետ անմիջական յարաբերութիւններից, դժուարութեամբ էին զարգանում։

Հայ-գաղթականը, ընդհակառակն, պատահելով օտար, աւելի լուսաւորեալ հասարակութեանը, ըմբռնելով օտար կրթութիւնը,—ինքն զարթնում էր, զգում էր և իր անձնական մտաւոր պիտոյքը։ Այն զգայմունքը որ քնած էր մեում նահապետական կեանքի շրջանում,—զարթնում էր յարակցելով օտար, ժամանակակից պահանջներին աւելի համապատասխան կրթված հասարակութեան հետ...։ Այդ է պատճառ, որ հայի մտաւոր կեանքի ժամանակակից նշոյները չը ծագեցան Երևանում կամ Վան ծովի եզերքին,—այլ նրա արդեան գրականութեան արդիւնքը, գրքերը, լրագիրները ու օրագիրները երևեցան Վենեցիայում, Փարիզում, Կ. Պոլսում, Պետերբուրգում, Մոսկվայում, Թէոդոսիայում և այլն...

### II

Երբ օտար երկիրներում հրատարակված այդ գրականութեան միջոցով փոքր առ փոքր լուսաւորվեցաւ և մտաւոր կեանքի ճաշակն առաւ հայերի այն մասը, որ անշարժ մնացած էր Հայ-ազգութենից բուն բնակեցրած տեղերում,—այն ժամանակ միայն յարուցվեցաւ մտաւոր կեանքի պահանջը և հայ-բազմամարդ կենդրոնական քաղաքներում։

Վենեցիայում կամ Մոսկվայում հրատարակված ամսագիրները, միջնորդ լինելով միայն եւրոպական լուսաւորութեան և հայերի մէջ, այն դաստիարակչի պաշտօն կարող էին կատարել մեր ժողովրդի վերաբերութեամբ, բայց հեռու լինելով մեր ազգից բուն բնակեցրած երկրից,—հետաքրքրութիւն չէին կարող նորա կեանքի պիտոյքները։ Կովկասի մայրաքաղաքում, Թիֆլիսում հրատարակվող պարբերական դրվածները արդէն երկրորդ քայլ են դէպի հայ-մտաւոր կեանքի առաջադիմութիւնը։

### III

Բայց սորանով չը պիտի բաւականանանք, չը պէտք է նայենք Թիֆլիսի կամ Կ. Պոլսի օրագրութեան, որպէս մեր մտաւոր գործունէութեան վերջին խօսքի վերա։

Պէտք է մեր բոլոր ջանքը գործ դնենք, հայ-օրագրութեան գործին դարձեալ մի քայլ անել տալ...։ Պէտք է նպաստենք, այժմ երբ հողը պատրաստ է մտաւոր մշակութեան համար,—որ հայերից բնակեցրած գաւառներում էլ ծագի ինքնուրոյն, տեղական մտաւոր կեանքը։ Պէտք է նպաստենք, որ գաւառական նշանաւոր կենդրոններում հրատարակվին տեղական պարբերական թերթերը։ Այդ տեսակ պարբերական հրատարակութիւնները բացի տեղական օգուտից, բացի այն, որ նրանք կը զարգացնեն ընթերցանութեան սէրը հայրենակիցների մէջ, նիւթ կը ներկայացնեն Թիֆլիսի կամ Կ. Պոլսի լրագրութեանը, կը կատարեն շատ դիպվածներում գաւառներից ստացվող թղթակցութիւնների պաշտօնը, տեղական խնդիրների առաւել մշակված նիւթեր մեզ առաջարկելով...

### IV

Մենք ասեցինք՝ հողը պատրաստ է...պարզենք մեր միտքը։

Վենեցիայում կամ Մոսկվայում հրատարակված ամսագիրները մի կողմից ժողովրդի հետ անմիջական կապ չունենալով, միւս կողմից իրանց տպագրված նիւթերին նայելով, չէին ներկայացնում մի ներքին, բարոյական կապ, յօդվածները չունէին, և չէին կարող ունենալ միմեանց մէջ կապ, ամսագիրները չունէին մի որոշ ուղղութիւն... Սոքա զանազան, միմեանցից անկապ նիւթերի ժողովածուներ էին, որք դուցէ ընտանեկան ընթերցանութեան համար հետաքրքիր նիւթ էին առաջարկում, բայց չէին կարող հասնել այն նշանակութեան, որին պիտի ձգտէ ամսագրի գրականական ձևը,—այն է՝ ուսումնասիրելով ազգային լրագրութեան և օրագրութեան մէջ ցրված միմեանցից անկապ, հում նիւթերը, միմեանց մէջ կապել, դասաւորել, մշակել և նրանց վրա հիմնվելով, ընդհանուր տնտեսական, ազգագրական, ուսումնական խնդիր յարուցանել, լրագրութեան մէջ բոլոր զարթեցրած հարցերից ընդհանուր տեսութիւն անել։ Այդ է իսկ ամսագրի պաշտօնը, այդ է ընդհանրապէս ընդունված ֆրանսիական revue բառի նշանակութեան ճիշդ թարգմանութիւնը,—տեսութիւն։

### V

Որ ամսագիրը կարողանայ ինքնուրոյն նշանակութեանը հասնել, նա պիտի հիմնվի այն ժամանակ, երբ կը բազմանան հայրենական քաղաքական, գրականական և մասնագիտական օրագիրները և շաբաթաթերթերը։ Օրագրութիւնը ամսագրի վերաբերութեամբ մի և նոյն դեր պիտի խաղայ, ինչ դեր որ խաղում են գաւառական թերթերը կենդրոնական թերթի վերաբերութեամբ, կամ նրանց բացակայութեան ժամանակ լրացնում են գաւառական թղթակցութիւնները...։

Մեր կարծիքով հայրենական պարբերական գրականութիւնը զանազան շրջանները անցնելուց յետոյ, այնքան պատրաստած է ազգի մտաւոր հողը, որ մեզ կը ներվի յուսալ, թէ կարճ միջոցում Վանի և Բագուի պէս քաղաքների մէջ մտադրած պարբերական թերթերի օրինակով, կարողանան մեր գաւառական քաղաքներից մի քանիսը ձեռք տալ տեղական թերթերի հրատարակութեանը...մեր կարծիքով Աղէքսանդրապոլ, Շուշի, Բագու, առ այժմ պատրաստ են այդ տեսակ գործունէութեանը։

Եւ որովհետև այդ դիտաւորութեան նշոյները երևեցան, մենք մեր պարտաւորութիւնը կը համարենք „Մշակի“ յաջորդ համարներից մինի մէջ՝ առաջարկել գաւառներում տեղական հայոց թերթ հրատարակելու ցանկացողներին, մեր կարծիքով անհրաժեշտ պրօգրամը։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԹԻՖԼԻՍԻ ՋՐԱՆՑՔԻ ԽՆԴԻՐԸ

Վաղուց է արդէն մեր հասարակութեան մէջ զարթեցրած է Թիֆլիսում ջրանցք շինելու և գազի լուսաւորութեան անհրաժեշտութեան խնդիրը։ Վաղուց է արդէն հասկացել են որ այդ երկու ձեռնարկութիւններ դլուխ բերելու համար անհրաժեշտ է արմատական միջոցների գործ դնելը։

Տարակոյս չը կայ, որ այդ երկու խնդիրները պիտի անչափ հետաքրքրեն Թիֆլիսցիներին, ուստի անհրաժեշտ է բարձրացնել այդ հարցերը և լրագրութեան մէջ, նոցա, որքան կարելի է, բազմակողմանի կերպով քննելու համար։

Քաղաքային վարչութիւնը այն եզրակացութեանը հասաւ, որ հարկաւոր է յանձնել մասնաւոր անձանց և, եթէ կարելի է, բաժանորդական ընկերութիւններին այդ երկու ձեռնարկութիւնների իրագործումը։ 'Ի հարկէ 'ի նկատի ունենալով երկուսի համանմանութիւնը դործի սկզբներում, օգտաւէտ կը լինէր միացնել նրանց, բայց նրանց մասին կանոնաւոր ու ճիշդ հասկացողութիւն միայն մի ներկայացուցիչ ունի այս կողմ վերայ, մի կառավարիչ, եթէ չը համարենք մի քանի ծովային զինուորներին, որոնց ծառայութիւնը նորանումն է պարունակվում, որ կղզին աղատ չը մոցնվի օղի կամ այլ մաքսապարտ (Zollpflichtig) նիւթերը։ Այս զինուորները, որոնք coast-gards (եզերքի պահապաններ) անուն են կրում, պարտաւոր են, ամեն անդամ, երբ մօտենում է մի նաւ, ելանել ծովի եզրը և քննել ամենայն առարկաները, որոնք եզրին են հասնում։

Կղզին ունի կառավարութեան կողմից չնորհած կամ պահպանած քանի մի առանձնութիւններ, օրինակ առանձին փոստի դրոշմեր, ինչպէս Անգլիայի այլ գաղթականութիւնները (Colonie), իրանց սեփական ազգային դրոշակ, որի գոյներ են կանանչ, կարմիր և սպիտակ, և որոնց մասին Հէլգոլանդցիները իրանց համար մի հինգտող ստանաւոր չինած ունեն.

Grün ist das Land,
Roth ist die Kant',
Weiss ist der Sand,
Das sind die drei Farben
von Helgoland!

այսինքն՝ կանանչ է երկիրը, կարմիր-ժայռը, սպիտակ աւազը, ահա Հէլգոլանդի երեք գոյները։

Հասկանալի է, որ Հէլգոլանդցիները, ոչինչ օգուտ չունենալով Անգլիայից, իրանց բոլորովին ազատ են համարում, և Անգլիացի անունը նոցա համար այնպէս օտար է, ինչպէս այլ ազգերի, այն զանազանութեամբ միայն, որ Անգլիացիները նոցա ատելի են։ Այս ատելութիւնը զանազան, բոլորովին ըմբռնելի պատճառներ ունի՝ նախ նոքա ազատօրէն չեն կարող ստանալ օղի և այլ ծանր խմիչք, որոնց նոքա, իբրև ծովի բնակիչներ մի կողմից, միւս կողմից իրանց կլիմայի խստութեան պատճառով շատ սիրում են, երկրորդ որ երբեմն Անգլիան նոցանից մարդիկ է պահանջում զինուորական ծառայութեան համար և վերջապէս, այն Անգլիացիները, որ նոցա կղզին հասնումեն, մեծ մասամբ ծովային զօրքին պատկանելով, որոնց անբարոյական վարմունքը եզերքը ելանելու ժամանակ և բնակիչների դէմ գործած կոպիտութիւնները յայտնի են ամենեցուն, Հէլգոլանդցին Անգլիացի անունը արտասանելով, չէ կարող դորա հետ չը միաւորել անբարոյականութեան, արբեցողութեան և կոպիտութեան գաղափարները։ Նոցա կարծիքը Անգլիացիների մասին չէ աչխատում

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հիւսիսային ծովի (Nordsee) մէջ գտնվում է Բրէմէն քաղաքից դէպի հիւսիս-արևելեան կողմը մի փոքրիկ, առանձնացած կղզի, որ իր դրքի պատճառով ամենայն յարմարութիւններ է ներկայացնում ծովային բաղանիքի։ Իսկ այդ պատճառով, քանի տարիներից ի վեր, դա դարձել է յուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներումը լողացողներից շատ յաճախած և սիրած մի տեղ։ Այս իր դրութեամբ հետաքրքիր երկրի փոքրիկ կտորը, Անգլիային պատկանող Հէլգոլանդ կղզի է։ Ամբողջ կղզին այնքան փոքր է, որ նաւակով (լաւ եղանակին) կարելի է հինգ քարորդ ժամու միջոցումը դորա շուրջը անել։ Դա կարմիր աւազաքարի (Sandstein) մի միակ ժայռից է բաղկացած, որի ամենաբարձր կէտը, ծովի մակերևոյթից, մօտ 200 ոտնաչափ բարձրութիւն ունի։ Այս ժայռից դէպի արևմուտքը գտնվում է աւազեայ մի կղզի — այս տեսակ կղզիները սովորաբար Düne անուն են կրում,—որը առաջ և մինչև անցեալ դարու սկիզբը, միաւորած էր կարմիր ժայռի հետ, իսկ յետոյ, մրրիկները պատառեցին միաւորող աւելի թոյլ տեղը և հալիքները, նախ հեղեղելով այս բնական կամուրջը, յետոյ փոքր առ փոքր հեռու տանելով քարերը և աւազը երկոյսնց կղզիներին բոլորովին զատեցին և այն տրտաքին տեսարան չնորհեցին, որ նոքա այժմ էլ ունեն, այսինքն դոցա մէջ մնացաւ քառորդ մղոն տարածութեամբ բաժանող ծովը։

Որպէս յիշած էի, Հէլգոլանդը Անգլիայի սեփականութիւն է, չը նայելով, որ թէ իր մօտիկութիւնը դէպի գերմանական եզերները,—չոգենաւը Համբուրգից մինչև կղզին 7 ժամու միջոցումը, իսկ Բրէմէնից 5 ժամու միջոցումն է հասնում,—թէ բնակիչներին անկասկած գերմանական ցեղին պատկանելումն, թէ վերջապէս որ կղզին միայն Համբուրգից է ստանում իր բոլոր պիտոյքների լրումն, այնպէս որ կարելի է ասել Համբուրգից է կախված Հէլգոլանդցիների կեանքը։

Անգլիայի համար այս կղզին իսկապէս միայն այն նշանակութիւն ունի, որ հարկաւոր ժամանակին, մի բաւականին յարմար նաւահանգիստ է ներկայացնում հիւսիսային ծովի մէջ։ Անգլիան

ընկերու համար,—առ այժմ քննենք ջրանցքի խնդիրը:

Մեզի հասնում են լուրեր, իբր թէ ջրանցքի գործին ձեռք տալու ուզողները սոքա են. 1) Շվաբէնի և Մօրի կոմպանիան, որ մի շատ եռանդոտ գործակատար ունի և 2) Անանուն մի ընկերութիւն, որի գլուխը կանգնում են իրանց երկար ծառայութեամբ մեր առևտրական շրջաններում և գրամագլխով քաղաքիս մէջ անուն և նշանակութիւն ստացած անձինքը:

Մինչև որ քաղաքը չէ յայտնել իր պայմանները (կոնդիցիա) ջրանցքի ձեռնարկութիւնը սորան կամ նորան տալու համար,—անկարելի է ասել ում առաջարկութիւնները ուրի շահաւէտեն, բայց մենք անհրաժեշտ համարում, աչքի առաջն ունենալով քաղաքի օգուտները, ամբողջ ձեռնարկութեան ապագայութեան գնահատելը, սկզբնական կամ նախապատրաստական հետազօտութիւնների միջոցով,—եթէ ոչ, ահա ինչ կարող է պատահել՝

Մի ընկերութիւն, կամ մասնաւոր անձինք ներկայանում են քաղաքային վարչութեանը ջրանցքի գործը վերցնելու հպատակով. նրանք ցոյց են տալիս ձեռնարկութեան արժէքը $1\frac{1}{2}$ անգամ աւելի, քան թէ ճշմարիտ ածէ, համաձայնում են ամեն պայմաններին և պահանջում են ապահովութիւն (գարանտիա) քաղաքի կողմից՝ չորս տոկոս (%): Քաղաքը չունենալով ոչինչ փաստ, որի վերա հիմնվեր, չը հիմնվելով սեփական հետազօտութիւնների վրա, պատճառ չունի մերժել առաջարկութիւնը... և ինչ կը լինի որա հետևանքը,—այն է որ քաղաքը 4% երաշխաւոր որպէս ապահովութիւն, իսկ 6% ինքն ձեռնարկութեան համար: *)

Մի և նոյն ժամանակ դեռ ևս սպասելով ճշգրիտ տպագրելը, ոչինչ յայտնի չէ ձեռնարկութեան արժողութեան մասին:

Այժմ դառնալով գործի հաւանական հետևանքին, մի և նոյն ժամանակ համակրելով վերև յիշված ընկերութիւններից երկրորդին, որովհետև նա կազմվում է քաղաքի բնակիչներից,—հետաքրքիր կը լինէր իմանալ՝ ինչ զէնք ունի նա ձեռին, որ կարողանայ հանդէս դուրս գալ Ֆիրմա ունեցող ընկերութեան հետ մրցելու համար: Այդ տեսակ ընկերութեան հետ մրցելը կը ներկայացնէ ուրեմն իրական արգելքներ:—

Որքան յայտնի է մեզ՝ հետազօտութիւնները արած չեն: Ընկերութիւն կազմող անձանց շրջանում անգամ կասկած է ծնում՝ հաւաստի չը լինելով թէ կօնցէսիան նրանց պիտի ընկնի թէ ոչ, արդեօք կը կամենան նրանք ծախսել սկզբնական հետազօտութեանը հարկաւոր դրամը...

Պարոններ. կայ մի ժողովրդական առած թէ՝ չը լի մէջ ընկածը անձրևից չի վախենայ: Կամենում էք ձեռք տալ մի գործին, որ միլիօն կը նստէ, և քաշվում էք քանի մի հազարներ ծախսելուց: Հիմնում էք մի ընկերութիւն քաղաքի մէջ ջրանցքը գլուխ բերելու, այն պատճառով որ նրան շահաւէտ գործ էք համարում,—և մի և նոյն ժամանակ չէք կամենում ոչինչ զոհել...այդպէս երբէք ձեր նպատակին հասնելու չէք:

Մ. Բ.

## ՆԱՄԱԿ ՄԵԾ ՇՈՒԼԱՎԵՐԻՑ

Նկատելով ձեր ուշք դարձնելը գաւառներից տեղեկութիւններին, ես մտաբերեցի Մեծ Շուլավերու և նորա շրջակայ գիւղերի նկարագրութեան յարաբերութիւնների անտեղեակ լինելը մեր ներկայ հրատարակութիւններին, ուստի պարտաւորութիւն համարեցի նկարագրել նորանց, որքան կարելի է ճիշդ և մանրամասն տեղեկութիւններով:

Մեծ Շուլաւէր գտնվում է 56 վերստ հեռաւորութեամբ Թիֆլիզից դէպ ի Հարաւ: Եթէ Թիֆլիզից ուղևորուած ճանապարհորդը գտանի իւրեան 5—6 հեռաւորութեամբ Մեծ Շուլաւէրից, և մի հայեացք ձգի դէպ ի Հարաւ, նա կարող է նկատել մի երկայնաձիգ հովիտ խիտ այգիների ծառերով ծածկուած, որպէս մի անբնակ խիտ անտառ. Արևելեան, նա մանաւանդ, Արևմտեան կողմից, որ խիտ անտառներով է պատած, այդ երկու կողմերը պատում են նորան շղթայակապ, ոչ այնքան բարձր կանաչազարդ ծառերով ծածկուած սարերով, որոնք գնալով Հիւսիսից Հարաւ կարծես կամենում են միանալ Լալուար ասուած սարի հետ, կազմելով իբրև մի ձուաձև եռանկիւն, ուր տեղից և առնում է իր սկիզբը տեղի միակ գետակը: Փոքր ինչ յառաջ գնալով, ճանապարհորդի առաջ իսկոյն լոյս կընկնի խորը ցած ընկած Խրամ գէտը:

Այս գէտը յայտնի է արդէն իր համեղ խրամուլի ասուած ձկներով, որ մեծ քանակութեամբ ծախվում է Թիֆլիզում, բայց ոչ Շուլավրեցիներից, այլ հենց իսկ Թիֆլիզեցիներից, թէև ըստ դիպուածքին Շուլաւրեցիները ևս տանում են երբեմն Թիֆլիզ ծախելու. ջուրը ոչ այնքան հաստեղ է, որքան վճասակար. իսկ գեղնաւուն գոյնը և Պղնձէ-Մաղան ասուած գիւղի ջրի խառնուրդը առնթ է տալիս հանքային ջուր կարծելու, ուր և իսկ անյայտանում է ադի ջրերը, սկսած Կումիս ասուած գիւղի շրջականներից: Այդ տեղ կայ մի ադի լիճ մի անադին ընդարձակ փոսում, (Կումսի փոս): Այդ լճի ափերումը միշտ լինում են սաստիկ մոխրագոյն և փայլուն ցեխեր: Հենց այս լճի շրջաններից, մանաւանդ, մինչև Խրամը կարելի է հանդիպել փայլուն մոխրանման հողերի: Խրամ գետի ափերը առատ է ուռենի ծառերով, իսկ հարթ ափերումը ցանում են ազարակին պատկանուածները սեխ, ձմերուկ, թամբաքու, կաղամբ, վարունգ և ուրիշ սորանց նմանները: Խրամի այն ափը, որտեղ գտանվում է այդ ափի պատկանողի ջրաղացը, այն է Սոփիա-խանումի ջրաղաց, որտեղ և մեծ և փոքր Շուլաւրեցիները ցորէն են բերում աղալու, ջրի պակասութեան ժամանակը, և այն տեղից Թիֆլիզ ծախելու, հենց այդ տեղից բարձրանալով սկսվում է Մեծ Շուլաւրեցւոց վարելա-հողերը, որ ցանում են միայն ցորէն և գարի Այդ տեղից դէպի արևելք, որտեղ Խրամը թէքվում է դէպի Հարաւ, գտնվում են ներքի Շուլաւէրը կամ Փոքր Շուլաւէրը: Բնակիչները Հայ-լուսաւորչականներ, 7 տնով միայն, պարապում են երկրագործութեամբ, ունեն մի հնացած եկեղեցի, չունեն տեղային քահանայ, այլ մեծ Շուլաւրեցւոց քահանաներից մինի հովվութեան տակ են. լիզուի հնչիւնները ապացուցանում են, որ Մեծ Շուլաւրեցիներից չեն:

Մեծ Շուլաւէրը պատկանում էր վրաց Սամխէթիայ ասուած նահանգին, Հայոց պատմութիւնից յայտնի է այդ կողմերը, որպէս Ծոփաց գաւառ. որ և Լալուար սարի կողմերումը մինչև այս օր կայ, ինչպէս ասում են տեղացիները Ծոփաց ձոր անունով մի աւերակ, այժմ պատկանում է Թիֆլիզի ուեզդիային:

Մեծ Շուլաւերու բնակիչները 100 տարիից առաջ Պարսից բարբարոսութեան պատճառաւ գաղթած են Շամշադինի գիւղերից, այդ պատճառաւ և բնակիչները բաժանուելով զանազան մասների (թաղ) կրումեն այն անունները, ինչ գիւղից նորանք գաղթած էին: Այսպէս Մեծ Շուլաւերը բաժանվում է երկու բաժանումների. Ջաղեամ և Ղամուրադ: Ջաղեամը բաժանվում է, Քեամանդար, Կարիս Մրեջուր թաղերի Ղարամուրադը բաժանվում է. Մելիք-Զադէ, կրկին Ղարամուրադ, Աղբուլախ, Շմեղ և Սմբթլու թաղերի: Այս ամէն մի թաղը ունի որպէս մի կառավարիչ, որ գործակատար է լինում հարկապահանջութեան ժամանակ, կամ մի ընտրողութիւն անելու ժամանակը և այլն: Բնակիչները հասանում են մինչև 400 տան, բոլորեքեանք իսկութեամբ Հայ-լուսաւորչականներ են, ունեն երկու եկեղեցի. Ղարամուրադինը Սուրբ Պօղոս և Պետրոսի եկեղեցի, իսկ Ջաղեամինը Սուրբ Աստուածածնայ եկեղեցին: Առաջինի փակ լինելու պատճառաւ քահանաները մի միաբանութիւն են կազմում Ջաղեամի եկեղեցումը: Ջաղամի, այն է Սուրբ Աստուածածնայ եկեղեցու գեղեցկութիւնը չէ կարելի դուրսը տեսանել, որքան ներսը. կոկած քարայատակով, շքեղ զարդարած սեղանով, և քանի մի գեղեցիկ պատկերներով. կանանց համար որոշած է առանձին տեղ իր փայտեայ վերնատնով, եկեղեցին սաղաչէն, կանգնած չորս հաստ սաղաչէն սիւների վերայ, միջակ մեծութիւնով և բարձրութիւնով, ունի փոքրաձև մի գմբէթ կանանց դրան չէմքի վերայ կանգնած, որ նայումէ դէպ ի Արևմուտք, նոյնպէս ունի և զանգակատուն մեծ գմբէթով, որ սովորականին չէ կարելի նմանացնել, շինած է տղամարդկերանց դրան մուտքի վերայ: Այդ դրան ճակատի վերայ ուշադրութեան արժանի է Մարիամ Աստուածածնայ գեղեցկանկար փարագրած պատկերը, որի տակի տողաչափով գրուածքը յայտնումէ եկեղեցւոյ հիմքի 1844—թ. և նոյն իսկ պատկերի 1864 թ. տեղիս արժանապատիւ Աւագ քահանայ Պօղոս Սահակեանցի ծախսով, որով, և պայծառացել է եկեղեցին հարուստ պատկերներով. Ղարամուրադայ Սուրբ Պօղոս և Պետրոսի եկեղեցին որի բարձրագոյն դիրքը, մարմարիանման, կոկած սպիտակ քարերով պատերը, նորա չորս ահագին հաստութեամբ քարեայ սիւները, նորա ահագին մեծութիւնը, որ Թիֆլիզու Վանքի եկեղեցուն կարելի է հաւասարացնել, կարող են ափսոսել տալ ամէն նորա բաց կողերը տեսնողին, որ ահա մօտենումէ 20 տարիի լրանալը նորա հիմքի դցելուց, ինչ պատճառաւ չէք կարողանում վերջացնել դորա չինութիւնը հարցրեցի ես մեր ծերունու Ղ....ին. ,,ընդիւր վեր, վենց վեր ըրեում ա Քրիստոսը դէսը անցկցած չրդի ըլիլ, վեր ըստեղ սէր չի հիլ արել (թողել), հլէ հենց տերրայ հմար ա վեր Զըգիրմնցիք մեզ քեսմակ չեն անում, վեր էս էս,. պատուական ժամի կելլէսիը կարենանք ծածկի...բա ընդիւր էլ Աստած կլիներիս խռովել ա, վեր էս տարուան տարին տուպ չը կաթեց .... բաղերն էլ չրացան պրծան, էլ խէր ու բերրեաքեատ չի մնացել...հարաբ էս զայդի էլ կեղ կելլի՞»: Մեծ Շուլաւերը ունի հինգ քահանայ: Բայց մօտ օրերս լսեցի, որ տեղիս տիրացուներից երկուսը տեսնելով մկրտութեան շատանալը, նկատելով մեռնողների աւելանալը յիշել են Քրիստոսի ասած ,,հունձք բազումք են և մշակք սակաւք ուստի կամեցէք՝ են ձեռնադրուիլ, որպէս հոգևոր հովիւներ, որոնք կամէին զարթեցնել ժողովրդին մթութեան մէջ: Դարանցից մինը ուսել է կարդալ և գրել տեղային ուսումնարանումը, իսկ միւսը կարդալ միայն ճաշոցը տեղիս քահանաների մինի մօտ:—Նորերումս լսեցի որ ժողովուրդը կոյր համաձայնութիւն է տուել, բայց յոյս կայ, որ դիմելով դէպի մեր հոգևոր հայրերը ձեռնադրուելու կը խղճան մեր այստեղի ցաւալի ժողովրդի վերայ, ուստի ցուցանելով մի այլ ապրուստի ճանապարհ, կամ նորից ուսանելու ճանապարհ՝ կը բաւականացնի մեզ հինգ քահանայով:

Կայ և այստեղ միակ տղայոց ուսումնարան, այո ուսումնարան, որին մինչև այսօր մեր ամբողջ Շուլաւերը մի կոպէկով անգամ չէ կամեցել վարձատրել, ինչ պատճառաւ, գիտեմ կը հարցանէք ինձանից. ես կը պատասխանեմ գիւղի այն վերոյիշեալներին,—Քրիստոսի ասածը յիշողներին համաձայնութիւն տուողների պատճառաւ, գիւղի Բէգերի և Մէլիքների ուշք չը դարձնելու պատճառաւ, տեղիս գիւղական կառաւարութիւնը իր պարտաւորութիւնը գիտակցաբար չը հասկանալու պատճառաւ, վերջապէս մի քանի չոտ և այլն և այլն...երի պատճառաւ: Այս բոլորը վերջիս և այլների հետ նայումեն Մեծապատիւ Աստուածի սովետնիկ բժիշկ Ռոմանոս Պօղոսեան Նադիրեանցի հայրենասիրութեան խնամքի վերայ, որ ինչպէս յայտնի է կառուցել է այս ուսումնարանը 1858 թ. հենց իւրեանից գնած գետնի վերայ. որ և մինչև այսօր ըստ իւր հայրենասէր խնամքի չափ կառավարել է և կառավարումէ: Ուսումնարանը բաղկացած է երեք սենեակից, ունի, կարելի է ասել վայելուչ սեղաններ: Ուսուցիչները են երկու, մի տանից քահանաներ, մինը վերոյիշած Պօղոս Աւագ քահանայ Իսահակեանցը որ աւանդումէ հայերէն լեզուն, վարժ կարդալ և գրել ոչ աւելի դրաբարի թարգմանութեամբ, Սրբազան պատմութիւն Հին և Նոր կտակարանի, Քրիստոնէական վարդապետութիւն, միւսը, Իսահակ քահանայ Իսահակեանցը որ, որպէս Թիֆլիզու Ներսիսեան դպրոցի աւարտած և ժամանակաւոր Թիֆլիզու պ. Տէր-Յակոբեանցի մասնաւոր դիմնազիումը աշակերտ եղած՝ աւանդումէ ռուսական լեզուն, վարժ կարդալ և գրել մասնաւոր թարգմանութեամբ, Մարտաբել և լինքն կառավարիչը, որ իրան բոլոր կղզու տէր համարելով, իր սեփականութիւն համարում է և բնակիչներին, մանաւանդ դոցա քընքոյշ և գեղեցիկ սեռը: Դժբաղդաբար կառավարչի համար, նորերումս ծնաւ մի կենդանի ապացոյց նորա վարմունքի և դատաստանը ստիպեց նորան (կառավարիչը մի և նոյն ժամանակ ամուսնացած է) մի մեծ տուգանք (կարծեմ 3000 թալէր) վճարել յօգուտ խաբված օրիորդին:

Հէլգօլանդ կղզին մի առանձին և իրան միայն սեփական բարբառ ունի, որ բոլորովին տարբեր է ուրիշ բոլոր գերմանական բարբառներից և միայն այդտեղ է պահպանվել, որի մասին Հէլգօլանդցիները իրանք ասում են՝ ,,մեր լեզուն տարածվում է ժայռից մինչև ի դիւնէ (Düne)»: Նկատելու արժանի է սակայն, որ աւազակղզու վերայ ոչ մի մարդ չէ բնակում: Գիտնականների կարծիքով դա հին Ֆրիզների լեզու է, չը նայելով, որ մերջին ժամանակներումը, գերմանացիների կղզին յանձնելու պատճառով, գերմանական լեզուին շատ տարբեր ընդունվեցան և Հէլգօլանդի բարբառումը: Այս լեզուին ամենամօտ է հօլլանդականը, բայց և դա բաւական տարբեր է: Ահա մի լեզու, որ կամաց բայց անշուշտ կորչելու վերա է, և այն պատճառով պահպանվելու չէ, որովհետև միայն մօտ 2000 մարդիկ են նորան խօսում, դա միայն մի աննշան գրականութիւն ունի և օտարները, քանի գնում է, աւելի գալիս են կղզին: Արդէն այժմ ինքեանք Հէլգօլանդցիները ստուգում են, որ հազիւ թէ մի մարդ կայ, որ իրանց լեզուն ճշգրտութեամբ խօսելիս լինի և դոցա թիւն էլ անդադար նուազում է:

Օտարների թիւը, որոնք ամենայն ամառը գալիս են Հէլգօլանդ, ծովի մէջ լողանալու դիտմամբ, հասնում է մինչև 3000 մարդ: Սակայն հազիւ են նոքա, որոնք այդտեղ աւելի երկար ժամանակ, քան չորս շաբաթ են մնում, որովհետև, չը նայելով կղզու առանձնութիւններին, որոնք զուրկ չեն բանաստեղծական յատկութիւններից, այդտեղ վարած կեանքը այնքան միակերպ է, որ չէ կարող գոհացնել մի մարդուն, որ սովոր է եւրոպական կեանքի յարմարութիւններին (confort): Կղզին ոչինչ վայելչութիւն չէ ներկայացնում՝ զբօսանքը ծովի վերայ, ձուկ բռնելը, ծովային թռչուններ որսալը, և լաւ եղանակին նայել արևի մայրմտնելուն,—միակ պարապմունք են, որ ունեն ծովային բաղանիքի հիւրերը ճաշից յետոյ: Առաւօտները, ընդ հակառակն չափազանց կարճ են երևում ամենեցունց: 8 ժամին սկսում են ամենքը նստակ նստել, որ Düne անցնեն, ուր որ լողանում են ծովումը—սորա համար գտնվում են Düne ի վերայ ամենայն տեսակ յարմարութիւններ, մինչ որ կարմիր ժայռի ափերին միայն սակաւաթիւ են լողացողները, որովհետև ալիքը, ժայռին անդադար խփելով, թէ գէտինը ոտների տակ շատ անհաւասար և քարոտ են դարձնում, թէ ժայռի մասնիկները իրանց հետ ձգելով, իրանք մի անդուրեկի կարմիր գունով են ներկվում: Düne ի ափին դրած են յիսունի չափ փոքրիկ, սենեակների նման չինած, փայտէ, երկու անիւների վերայ կանգնած ծածկած սայլեր: Լողացողը մրտնելով դորա մէջ զանգակ է քաշում, որին լսելով երկու երեք ծառաներ սայլը մղում են մինչև ջուրը և լողացողը կարող է սայլի հետ միաւորված մի փոքրիկ սանդուխտի միջոցով անմիջապէս ջուր մտնել: Կրկին սայլը վերադառնալուց յետոյ, լողացողը զանգակ տալով իր ցանկութիւնն է յայտնում ափը վերադառնալ, որին հետևում են նոյն ծառաները սայլին լծվելով և յետ քաշելով մինչև ցամակը: Այս սայլերի մէջ լողացողը դտնում է տուալէտի համար ամենայն հարկաւոր առարկաները:

Ուրիշ տեղերումը ուր որ ծովը աւելի զորեղ ալիքներ ունի, օրինակ Հօլլանդիայի և Բէլգիայի եղերներումը (օրինակ Շէվէնինգէն) սայլերը պիտի աւելի մեծ չինվին և այս պատճառով, առաւել ծանր լինելով, ոչ թէ մարդիկների միջոցով ջրի մէջ են մղվում, այլ մի ձի են լծում սայլին:

Լողանալուց յետոյ մարդը նոյն աւազակղզու վերայ է գտնվում և իր քաղցը յագեցնելուց յետոյ կամ գնում է պատել աւազակղզու վերայ, կամ որոնումէ իր համար մի յարմար տեղ, ուր որ պարկումէ աւազի մէջ կամ փոքր ինչ ննջելու համար, ծովային ջրի սաստիկ զրգռիչներգործութեանը ենթարկվելուց յետոյ և կամ գործ է ածում այն ժամանակը որ ն իցէ գիւրին ընթերցանութեան: Այսպէս միակերպ բայց գեղեցիկ անցնում են առաւօտեան ժամերը ծովային բաղանիքումը:

Բացի ծովային բաղանիք գործածողները, հիւրերի թիւումը գտնվում են և բաղմաթիւ բնագէտներ, մանաւանդ կենդանաբաններ և բուսաբաններ, որոնք տարու յարմար ժամանակ գործ են ածում Հէլգօլանդի ծովային կենդանիները և բոյսերը, որոնց բազմակերպութեամբ ճոխ են կըղզու եղերները, ուսումնասիրելու նպատակով:

Համբուրգ. հոկտ. 1872. Ա. Արծրունի

*) Օրինակ, եթէ ձեռնարկութեան իսկական արժէքը 800,000 ռուբլի է, ուրեմն 4% ապահովութիւն հաշվելով, կանէ 32,000 ռուբլ: Բայց ընկերութիւնը յայտնում է թէ ձեռնարկութիւնը ածէ 1 միլիօն 200 հազար,—քաղաքը հաւատումէ և տալիս է 4% գարանտիա, որ կանէ 48,000 ռուբլի: Այդ 48 հազարը ձեռնարկութեան իսկական արժողութեան, 800 հազարի վերաբերութեամբ, կանէ ուրեմն ոչ թէ 4% այլ 6%:

Մ. Բ.

տեմատիկան մինչև կոտորակը, մասնաւոր աշխարհագրութիւն և երգեցողութիւն։ Թէև ստանում են ոչ այնքան դումար, բայց աշխատում են սրտառուչ։

Բայց չէ, կարող ենք պարծենալ մեր պողաբեր այգիներով, անտառներով, տափերով նախադասելու նորակառոյց աւազակների բանտով, նորակառոյց բաղանիքով. հաշտարար դատաւորով, ցորենի չտեմարանով, մեր գետակի վառ ընութիւնով, մեր ուրախալի տօներով, նա և մեր ծերունի Ղ....ով, և ուրիշ սորան նման բարի և չար, նախանձ և անհանձ մարդկերանցով, որոնց կռիւների, բարեկամութեան, ուրախութեան, սիրոյ և նախանձութեան, գործունէութեան և աշխատասիրութեան, բայց ոչ ծուլութեան, հարսանիքի և վերջապէս մեր քաղցրահնչիւն բարբառների մասին յետոյ կը գրեմ. իսկ առ այժմ մնում եմ խմբագրութեանդ յառաջադիմութեան ցանկացող

Արշակ Ծատուրեանց։

1-ն յունվարի

## ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒԻՑ

Գ.

Թիի ծառի մշակութեան, կամ չերամի որդնը պահելու և կամ երկրագործական որ և իցէ ճիւղով պարապելու ձեռնամուխ եղող պատահած չէ այստեղ զետեղվող օտարականներից։ այսպիսի բաները անպէտք են համարում, աւելի սիրում են պարապել վաճառականութիւնով, որը աւելի յարմար կլիներ անուանել մանրավաճառութիւն։ տեղացի հայերից շատերը ձգտուած են նոյնպէս դէպի այդ, ի բաց առեալ մի քանի տներ, որոնք ունեն մշակուած և ընդարձակ կալուածներ, հօտեր (սուրուներ ոչխարի կամ տաւարի)։

Այդ ձգտումը, սովորութիւնը դէպի վաճառականութիւն, ոչ թէ միայն նկատելի է այստեղ, այլ և դա կազմում է մեր հայերի գլխաւոր յատկութիւնը ամեն տեղ։ Գիւղացին եթէ պատահումէ որ ձեռք է բերում փոքրիկ դումար, նա աւելորդ է համարում հողագործութիւնով պարապել. նա դիմումէ չարչութեան քաղաքից մանդրու մուն-դը բաներ տանելով գիւղը և այստեղից էլ դանաղան պաչարներ տանելով քաղաքը և այդպիսով թողնում է նա իր պարապմունքը, որը յառաջ կգնար եթէ ձեռք բերուած դումարը դործ դներ այդ մասին։ Հաղը զրկվում է իր նոր արդիւնաւոր այգից—փողից և մնում է այնպէս ինչպէս առաջ էլ կար. իսկ մեր կապիտալիստները յայտնի է որ նոքա աւելի պատրաստ են պարապել մի մեքենական առեւտրով քան թէ իրենց ուշադրութիւնը դարձնել հողին կամ որ և իցէ գիւղատնտեսական ճիւղի։ Այսպիսի դրութիւնից խօսք չկայ կնետեի այն, որ մեր հողագործութիւնը, անտեսագիտութիւնը բնական նիւթերի մշակելը երեսի վրայ թողած կմնան և չեն յառաջացնել որ և իցէ կատարելագործութիւն։

Նուխուայ մէջ պատրաստում են կաշի «թումաճ» կոչուած, որը վաճառահանումեն Կովկասի դանաղան քաղաքների համար. այդ արուեստով պարապում է ժողովրդի հասարակ դասը և այդ արուեստը իր հնութեան կնիքն է կրում. ներկարարութիւնը նոյնպէս կազմում է հասարակ ժողովրդի պարապմունքը. այստեղ առ հասարակ պատրաստում են Պարսկաստանի ապրանք դատաք կամ չատ այսպէս անուանուած, որից գընում են գիւղացիք և մեծ մասը լեռնական լեկղիները· սրանք գալիս են այստեղ տարին երկու անգամ, գարնան և աշնան վերջերը բերելով իրենց ձեռագործ շալէղենները և տանելով իրենց հետ փոխարէնը դանաղան ապրանքներ գլխաւորապէս, ինչպէս՝ վերնը ասացի, դատաք կամ չատ։ Ուրիշ հասարակ արուեստների մէջ ոսկերչութիւնը և զէնք շինելը այստեղ աւելի զարգացած է. և ասիական ճարտարաշինութեան օրինակներ կարող են դանուել Եւրոպացւոց առջև. իսկ միւսները կօշկակարութիւնը, դարբնութիւնը, դերձակութիւնը չեն ներկայացնում որ և իցէ նորութիւն այլ այնպէս են, ինչպէս և առաջ էլ եղած են։

Նուխի ունեցած է իր փառաւոր ժամանակը 64—66 թուականները, որոց միջոցին, մի կողմից մետաքսը, բուժոժը չափազանց թանկացաւ և միւս կողմից Ամերիկայի պատերազմը պատճառ դառաւ մանիֆակտուրի (կտաւեղէնի կամ չիթեղէնի) չափազանց բարձրանալուն, որից մեծամեծ օգուտներ քաղեցին, ընկերութիւններ հիմնեցին, բայց ինչպէս ամեն բանի մէջ չափազանցութիւնը վնասակար է, նոյնպէս և այդ ժամանակուայ առ առուտուրը իր սահմանին անցնելով հետևանքը ուրիշ բան չեղաւ, բայց եթէ իրարու ետևից մնանկութիւններ (կոտր ընկնիլ) անկարգ գործեր... Հայի վաճառականութիւնը կարծես բնական է, որ չէ յաջողվում, չէ զարգանում ինչպէս եւրոպացուն և այդ ցաւալի երևոյթի պատճառը անժխտելի կերպով է անկանոն և տգէտ առ առուրանելը։

5 դեկտ. 1872. Մ. Գ. Աղանեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրումեն Ղզլարից որ նոյեմբերի 26-ին այդտեղի երկսեռ ուսումնարանի հոդաբարձուքը կատարեցին տղայոց ուսումնարանի տարեդարձը։ Նամակագրի խօսքերից երևումէ որ Ղզլարի հասարակութիւնը չատ գոհ է դոկտոր Սուլթան-Շահի, (որ տեսուչէ) պ. Քուչուբէկեանի գանձապահ) և պ. Կամկամեանի գործունէութիւնից։

***

Իշխ. Բէբութովից խմբագրած Тифлисской Вѣстникъ լրագրի երկրորդ համարում կարդում ենք մի առաջնորդող յօդված թատրոնի վերա, որտեղ հեղինակը ասում է թէ մեծ նշանակութիւն ունի և տեղական լեզուներով թատրոնը մի կողմից մրցնելով ժողովրդի մէջ ընդհանուր մարդկային մրցքերը, միւս կողմից ռուս ծառայողներին էլ հեշտ միջոց ներկայացնելով տեղական լեզուները ուսումնասիրելու։ Բայց յօդվածի վերջին մտքերը չը հասկացանք... այնպէս է երևում որ յօդվածագիրը պահանջում է կառավարութիւնից դրամական օժանդակութիւն տեղական թատրոնի համար...։

***

Վաղարշապատից գրում են մեր լրագրին յունվարի 3-ից՝ մինչև այսօր ոչ ձիւն, ոչ անձրև և ոչ ցուրտ տեսանք· եղանակը կարծես աշնային է։ Առաջին հարկաւորութեան մթերքը, օրինակ գարին և դարմանը միշտ թանկ են, իսկ ցորենի խալվարը 20 մանէթի իջաւ։

***

Յունվարի 2-ին 1873 թ. Ս. Պետերբուրգում տրված է եղել 1 ներքին 5% փոխառութեան և ահա դուրս եկած տոմսակների գլխաւորները։

| № Սերիայի | № Տոմսակի | Տարած դումար |
|---|---|---|
| 13,031 | 23 | 200,000 |
| 8,040 | 40 | 75,000 |
| 13,104 | 36 | 40,000 |
| 13,043 | 31 | 25,000 |
| 7,001 | 50 | 10,000 |
| 4,240 | 11 | |
| 16,140 | 29 | |
| 7,262 | 30 | 8,000 |
| 1,732 | 4 | |
| 19,517 | 6 | |
| 10,139 | 47 | |
| 7,820 | 9 | |
| 6,254 | 36 | 5,000 |
| 12,709 | 16 | |
| 16,041 | 32 | |
| 12,558 | 8 | |
| 1,164 | 4 | |
| 7,260 | 28 | |
| 2,157 | 43 | |
| 9,074 | 3 | |

***

Մենք լսումենք որ Թիֆլիսի օրիորդաց Ս. Մարիամեան ծխական ուսումնարանը նորերումս տիկին Նկատերինէ Սօղոմոնեան Ռոտինեանցից 50 ռուբլի նուէր ստացաւ։ Շնորհակալութիւն այդպիսի տիկիններին։

***

Նուխուց գրումեն մեզ, որ այդտեղ առուտուրը այժմ թոյլ է։ Թելը Կ. Պոլսի համար քաղցր առնումեն, իսկ Մոսկվայի համար ոչ։

***

Մեծ Շուլաւերի թղթակիցը հաղորդումէ մեզ հետևեալը· նորերումս կարծես մեր գիւղացիք հասկացան ընկերութեան օգուտը, յիշելով իրանց ջրի ամիսներով ցամաքելը, ուստի կամենումեն մի ջրանցք բանալ Բորչալուի գետի կէսը բերելով. այդտեղից մինչև գիւղը ասումեն որ 15 վերստ է։

***

Մեր Զաքաթալի նամակագիրը հաղորդումէ մեզ որ Զաքաթալի պէս փոքր տեղում ստանումեն հայոց պարբերական հրատարակութիւնները հետևեալ համեմատութեամբ. «Մշակ» լրագրի 14 օրինակ, «Դաստիարակ» ամսագրի 6 օրինակ, «Արարատ» 4 օրինակ և «Մեղու Հայաստանի» 4 օրինակ։

Հետաքրքիր կը լիներ իմանալ միւս քաղաքներում ինչ համեմատութեամբ ստանումեն հայոց պարբերական թերթերը։ Ցոյս ունենք որ մեր թղթակիցները դանաղան քաղաքներից կը հաղորդեն մեզ սորա մասին։

***

Թիֆլիսի Գիւղատնտեսական ընկերութեան մէջ յունվարի 13-ի նստում, քննվեցաւ այն խնդիրը՝ թէ ընկերութենից նշանակված դրամական օժանդակութիւնը վրաց «Գիւղական լրագրին» հարկաւոր է նուիրել մի նոր լրագրի հրատարակչուն։ Դոկտոր Գրիգոր Արծրունին առաջարկելով գործ դնել յիշեալ օժանդակութիւնը հայ-վրաց գիւղական լրագրին, ընդարձակեց իր միտքը ցոյց տալով մօտաւորապէս թէ ինչ ձեւով կարելի կը լինի իրագործել հայ-վրաց գիւղական լրագրի խմբագրութիւնը։ Ինկատի ունենալով այդ առաջարկութիւնը, ընկերութիւնը յանձնեց պ. Արծրունուն գրաւոր կերպով ներկայացնել ժողովի խորհրդին իր կարծիքը։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հարկաւոր ենք համարում տարվայ սկզբում ընդհանուր քաղաքական տեսութիւն անել անցեալ 1872 թուի, Եւրոպայի գլխաւոր երկիրների։

Անցեալ տարին խաղաղութեամբ անցկացաւ և երկու գլխաւոր երևոյթները յոյս են տալիս այդ դրութեան շարունակվելուն։ Մինը Իլէբէմի գործն է, որ բարի օրինակ է, անբաւականութեան դիպվածները ոչ թէ արիւնահեղ պատերազմի միջոցով, այլ միջնորդ դատարանի օգնութեամբ վճռելու,—միւսը երեք կայսրների տեսակցութիւնն է որ երաշխաւորութիւն է տալիս խաղաղութեան պահպանվելուն։

Ֆրանսիայի ներքին դրութիւնը, որ ենթարկվեցաւ շատ փոփոխութիւնների, տարվայ վերջը, կարծես, մի հաստատ ձև ստացաւ։ Գուցէ չէ կարելի լիովին հաւատալ Թիէրի և Ազգային-ժողովի բազմութեան մէջ կատարեալ հաշտութեանը, բայց այնուամենայնիւ հաւանական է որ այսուհետև նախագահի յարաբերութիւնները Ազգային-ժողովի հետ բնական կերպարանք պիտի ընդունեն։ Թիէրը ինքն պահպանողական է, ուստի բաժանվելով դեկտեմբերի 14-ի նստում ծայրայեղ ձախակողմեաններից և դիմելով աջակողմեան պահպանողական կուսակցութեանը, նա աներկիւղ որոշումէ թէ իր քաղաքական համոզմունքը, թէ Ֆրանսիայի քաղաքական դրութիւնը։ Պահպանողական կուսակցութիւնը, մինչև անգամ միապետականները, պիտի հասկանան որ միապետական ձևը անիրագործելի լինելով Ֆրանսիայի մէջ, նրանց պարտաւորութիւնը պիտի լինի տերութեանը ձեռք ձգելով, միացած այժերով հիմնել Ֆրանսիայի մէջ միակ իրագործելի ձևը,—պահպանողական հանրապետութիւնը։

Անգլիան Գլադստոնի մինիստրութեան առաջնորդութեամբ անընդհատ հետևումէ արուեստագործական և առևտրական օգուտներին և երևումէ որ նա կատարելապէս հրաժարվել է Պալմերստոնեան քաղաքականութեան ձևից, արհամարհելով այն ամենը որ նպատակ ունի աճեցնել նրա արտաքին քաղաքական նշանակութիւնը, և որ անմիջապէս չէ վերաբերում նրա մասնաւոր անտեսական զարգացման և բարեկեցութեան։

Իտալիայում թէև կղերական միաբանութիւնների հետ սկսած ներքին պատերազմը մի վերջնական եղրակացութեան չէ հասել, բայց այնուամենայնիւ պ. Լանցայի մինիստրութեան բռնած քաղաքական եղանակը կղերական հնացած տարրի ընդդիմադրութեան առաջ,—անաչող հետևանք չէ ունեցել։ Նմանապէս մասնաւոր, վերջին ժամանակ յաճախ կրկնվող յեղափոխական շարժումները գործերի ընդհանուր ընթացքի վրա նշանաւոր ազդեցութիւն ունեցած չեն։

Իսպանիայի դրութիւնը աւելի խառնված է երևում, և անկարելի է նախագուշակել ինչ հետևանք կունենայ նրա ներքին անորոշ դրութիւնը։ Թագաւորը (Իտալիայի թագաւորի որդին) սահմանադրական համոզմունքներում մեծացած, ստիպված է լինում Կորտէսների միակ որոշված կուսակցութենից օգնութիւն խնդրելու, այնէ արմատական կուսակցութենից...Պ. Ցորիլլայից կառավարված մինիստրութիւնը թէև համակրութիւն չունի երկրի մէջ. բայց առայժմ և վտանգաւոր և ծանր հակառակորդ չունի, այնպէս որ բոլոր անբաւականութիւնը այժմեան կառավարութեան դէմ յայտնվումէ զանազան կուսակցութիւններից գրգռված անվերջանալի մասնաւոր ապստամբութիւններով, որք ամբողջ երկիրը շարունակ տենդային դրութեան մէջ են պահում...Պ. Ցորիլլայի արմատական կուսակցութիւնը միայն հանրապետականների հետ սիրահարական յարաբերութիւններ է պահպանում, այն էլ նորա համար, որ վտանգաւոր հակառակորդ չէ համարում նրանց, բայց առայժմ նրանց հետ առ երես բարեկամութիւնը անհրաժեշտ է տեսնում։ Իսկ Սէրանոի և Սագաստայի պահպանողական կուսակցութիւնը այնքան թոյլ է, որ ստիպված է լինում տանել արմատականների կողմից հրապարակական մեղադրանքները, իբր թէ նոյեմբերի 11-ին ծագած խռովութիւնները և թագաւորին սպանելու փորձը նրանց գործն էր...

Գերմանիայում ներքին կռիւը ծայրայեղ կղերականների դէմ սաստկանումէ։ Բիսմարկի կառավարութեան առաջադէմ վերանորոգութիւնները պատահումեն սաստիկ ընդդիմադրութեան հին պահպանողականների (աւատականների), ուղղափառ բողոքականների և կաթոլիկ կղերականութեան արտաքինից պաշտպանողների միացած այժերի կողմից. Այդ հանդամանքները ազդեցութիւն ունեցան և գերմանական կենդրոնական կառավարութեան, Բէրլինի մինիստրութեան կազմակերպութեան վերա։ Երևի թէ մինիստրութեան վերակազմութիւնը անփախչելի է։

Թէև Թիւրքիայի արտաքին քաղաքականութիւնը 1872 թուի ընթացքում բաւական խելացի և չափաւոր է եղել, բայց նոյնը չէ կարելի ասել նրա ներքին քաղաքականութեան մասին։ Ներքին կառավարութեան անհաստատութիւնը այն հետևանքն է ունեցել, որ անչափ յաճախ փոփոխութիւններ են եղել մի տարվայ ընթացքում մինիստրների, մեծ-վեզիրների և պաշտօնեաների մէջ,—և այնուամենայնիւ ոչ երկրի տնտեսական դրութիւնը, ոչ պետութեան ֆինանսները բաւականացուցիչ դրութեանը հասած չեն։ Թիւրքիայի ներքին բարեկարգութեան խնդիրը երևի կը մաշի դեռ ևս պետական մարդիկներից շատերին։

Եւրոպայի փոքրիկ, չէզոք պետութիւնները շարունակումեն իրանց ներքին առաջադիմութեան խաղաղ գործը։ Բէլգիան վերակազմումէ իր գաւառների, համայնքների և մասամբ պատգամաւորների ժողովները։

Հոլլանդիան պարապումէ իր գաղթականութեանց հիմնարկութիւնների վերակազմութեամբ և միւս կողմից գլուխ է բերում այնպիսի մեծ ձեռնարկութիւնները, ինչպէս Հիւսիսային ծովից ջրանցք շինելը, որ պիտի նոր կերպարանք տայ իր մայրաքաղաքի առուտուրին։

Շվէյցարիան նորից պատրաստվումէ իր սահմանադրութեան վերաքննութեանը։ Նրա երկպառակութիւնը Հռոմի աթոռի հետ չէ սպառնում փոքրիկ երկրի ոչ արտաքին ոչ ներքին խաղաղութեանը։

Վերջապէս եւրոպական մի մեծ պետութեան, Աւստրիայի դրութիւնը որոշվումէ նորանով, որ նրա ներքին քաղաքականութեան բռնած ընթացքը յոյս է տալիս մեզ, որ նա իր բոլոր ջանքը պիտի գործ դնէ, պետութիւն կազմող բոլոր ազգային խմբերին Ունգարիայի պէս ներքին կառավարչական անկախութիւնը շնորհելու, հաւասարացնելով ամեն տեղ ընտրողական և կառավարչական իրաւունքները։

Թէև այդ ընդհանուր տեսութեան մէջ ենք եւրոպա կան զլխաւոր երկիրները աչքի առաջ ենք ունեցել, թող ներվի մեզ մէկ երկու խօսք ասել և Ամերիկայի միացեալ Նահանգների վրա: Գրանտը կրկին ընտրվեցաւ Նախագահ,—այդ կը նշանակէ որ յաղթվեցաւ ռամկապետական անվանված կուսակցութիւնը և յաղթող մնաց այն կուսակցութիւնը (Հանրապետականները) որք պատուելով մինչև յայտնի մի աստիճան պետութեան անկենդրոնականութիւնը, մի և նոյն ժամանակ չեն թոյլ տայ այդ ձևի այն հրեշաւոր զարգացմանը, որ առանձին նահանգների կառավարչական անկախութեան անունով պաշտպանում էր երկար ժամանակ ստրկութեան իրաւունքը, իսկ դեռ ևս մօտ ժամանակներում քաղաքացիների մէջ անհաւասարութիւն էր պաշտպանում, խտրութիւն դնելով սևերի և սպիտակների քաղաքական իրաւունքների մէջ: Մի և նոյն ժամանակ Գրանտի կառավարութիւնը խօստանում է այժ տալ Միացեալ Նահանգների և արտաքին քաղաքականութեանը:

## ՆԱՊՕԼԵՈՆ III-Ը

Անցեալ տարվայ դեկտեմբերի 28-ին վախճանվեցաւ Անգլիայում պանդիտութեան մէջ այն մարդը, որ թէև հասել էր ամենամեծ նշանակութեանը Եւրոպայի մէջ, ահագին ազդեցութիւն է ունեցել եւրոպական քաղաքականութեան վիճակի վրա,—բայց որի ամբողջ կեանքը ներկայացնում է բախտախնդիր թափառականի պատկերը, պանդխտութեան մէջ մեծացած և պանդխտութեան մէջ մեռած մութ անձնատուրութիւնը, որի գործունէութեան միակ չարժառիթը անասելի փառասիրութեան զգացմունքն էր: Այդ զգացմունքին լրում տալու համար XIX-որդ դարի այդ հերոսը յետ չէր կանգնում ոչ մի անողներելի միջոցներից: 1808 թուին Փարիզում ծնված նա ստիպվեցաւ արդէն 1815 թուին Նապոլէոն I-ի վերջնական անկումից յետոյ աքսորանք գնալ: Առաջ Գերմանիայում, յետոյ Շվեյցարիայում ուսում առնելով, նա մտաւ շվեյցարական զօրքը և 1834 թուին այդ զօրքի մէջ կապիտան էր. 1831 թուից սկսվում է նրա քաղաքական կեանքը. սա մի անաջող քայլ էր գնալ Լէհաստանի ապստամբութեանը մասնակցելու: 1832 թուին նա հրատարակում է իր առաջին քաղաքական գրվածքը, „Rêveries politiques“ անունով, որի մէջ առաջին անգամ երևում են այն ուղղութեան նշոյները, որք նրա ամբողջ քաղաքական գործունէութեան ուղեցոյց պիտի դառնային՝ նապոլէոնական կայսրութեան վերականգնելը հանրապետական հիմնարկութիւններով. . . . այդ խաբեբայական գաղափարից, որով կարող էր միայն տգէտ ամբոխը յափշտակվել, Նապոլէոն III-ը իր համար քաղաքական դրօշակ կազմեց:

1836 թուին նրա դիտաւորութիւնը Ստրասբուրգի մէջ Լուի Ֆիլիպպի կառավարութեան դէմ ապստամբութիւն անելու այնտեղ եղած զօրքի միջնորդութեամբ՝ չաջողվեցաւ,—նա բռնվեցաւ և աքսորվեցաւ Ամերիկայ: 1840 թուին նրա փորձը բախտախնդիր արբանեակների օգնութեամբ Բուլոնի մէջ ապստամբութեան միջոցով Ֆրանսիայի գահը իր ձեռքը գցելու, այն հետևանքն ունեցաւ, որ նրան նստացրին Համ անուանված բանտը, ամբողջ կեանքի բանտարկութեանը դատապարտելով. . .:

Բանտի մէջ նստած, նա ձեռք չէր վերցնում իր նպատակներից: Նա լաւ էր հասկանում որ մի միջոց կար միայն սեփականութիւն չունեցող ամբոխի համակրութիւնը գրաւել, այն է խօստանալ նրան որ գահին հասնելուն պէս պիտի իր բոլոր ջանքը դործ դնէ նրա անմխիթար դրութեանը դարման տալու, պիտի վերջ դնէ պրօլէտարիատին, պիտի բժշկէ սեփականութիւն չունեցող դասը իր բոլոր ցաւերից. . .: Շարունակ յօդվածներ տպելով „Progrès du Pas-de Calais“ լրագրում, և 1844 թուին մի բրօշիւր հրատարակելով „De l'extinction du Paupérisme“,—Նապոլէոնը սոցիալիզմի վարդապետութեան ամենածայրայեղ մտքերը միացնելով Բոնապարտեան կայսրութեան գաղափարի հետ, ձայն էր բարձրացնում ապատութեան անունով և բողոքում էր Լուի Ֆիլիպպի կառավարութեան դէմ...: Իսկ այդ բռնաւոր անուանված տէրութիւնը նրան թոյլ էր տալիս բանտից իր յեղափոխական գրվածները հրատարակել. . .: Այդպէս չը վարվեց նա երբ ինքն գահին հասնելով, աքսորեց նոյն Օրլէանեան ընտանիքը, յափշտակեց նրա կալվածները և արգելեց Ֆրանսիայում նրանց բոլոր զբրվածները:

Այդ մարդը ոչ մի միջոցի առաջ չէր կանգնում. ինչպէս Բուլոնի խռովութեան փորձի մէջ նա չը քաշվեց իր նպատակին հասնելու համար պահապան զինուորին իր ձեռքով սպանելու, այնպէս և բանտից փախչելու համար չը քաշվեց խաբեբայութիւնից օգնութիւն խնդրելու, հագնելով մի արուեստաւորի հագուստը. . .: Այդ ձևով կը չարունակէ նա իր ամբողջ գործունէութիւնը. . . . 1848 թուին, երբ Ֆրանսիան հանրապետական քաղաքական ձևը ընդունեց, Նապոլէոնը ներկայանում է հայրենիքը, յայտնելով, որ աշխարհի ամենաբարձր գահը նա չնչին է համարում իր հայրենիքին որպէս հասարակ զինուոր ծառայելու փառքի առաջ. . .: Ազգային ժողովը քանի մի տատանումներից յետոյ, ստիպված է լինում ընդունել նրան որպէս ժողովրդից ընտրած պատգամաւորին:

1848 թուի դեկտեմբերի 20-ին, յաղթելով ուրիշ կանդիդատներին ընտրութեան մէջ, նա ընդհանուր քուէարկութեան 6 միլիոն ձայներով ընտրվում է ֆրանսիական հանրապետութեան նախագահ,—բայց այդ թուից մինչև 1851 թիւը բոնապարտեան զաղափարը տարածելով չրջաբերականներով, իր կուսակցութիւնը մեծացնելով, անդադար Ֆրանսիայի մէջ ճանապարհորդելով, չինծու կերպով և փողով զորքի հմակրութիւնը գրաւելով,—դեկտեմբերի 2-ին 1851 թուի արդէն հեշտութեամբ կարողանում է կոտրել իր երդումը, որ տուած էր հանրապետութեանը հաւատարիմ մնալու, կարողանում է Փարիզը իր ձեռքը դցել, հարբած և կաշառված զորքի միջնորդութեամբ կոտորելով մայրաքաղաքի փողոցներում իրան պաշտպանող ժողովուրդը, կարողանում է կալանաւորել հանրապետութեանը հաւատարիմ մնացած նշանաւոր անձերից չատերին, նրանց բանտարկել, աքսորել. . .:

Այդպէս հիմնվեցաւ այդ զարշելի արիւնահեղ գործի վրա Բոնապարտեան երկրորդ կայսրութիւնը. . .:

Այդպէս հիմնվեցաւ այն կայսրութիւնը, որի հիմնելը ինքն կայսրը իր ձառերից մինի մէջ կնքեց հետևեալ խօսքերով՝ „կայսրութիւնը խաղաղութիւնն է“:

Ասելի ծիծաղելի կերևան այդ խօսքերը, երբ կը յիշենք որ Նապոլէոն III-ի թագաւորութեան հետևեալ տարիները ներկայացնում են մեզ անընդհատ պատերազմները, սկսած Ղրիմի պատերազմից մինչև վերջին գերմանական պատերազմը. . .:

Նապոլէոնի քաղաքականութեան եղանակի բոլոր դաղանիքը նորանումն էր պարունակվում, որ չողոքորթելով առանձնապէս հասարակութեան ամեն մի դասին, պահպանի ամենի մէջ հաւասարակշռութիւնը: Սեփականութիւն չունեցող ամբոխը կերակրելով սոցիալական խոստումներով, ամբողջ ժամանակը պարապեցնում էր Փարիզի վերանորոգութեան չինութիւններով, մի և նոյն ժամանակ իբր բարոյականութեան նպատակով արգելում էր առողջ ընթերցանութեան զբրվածները, միւս կողմից հեշտացնելով ժողովրդի մէջ „Petit Jonrnal“ լրագրի պէս դարդակ ընթերցանութիւնը: Թատրոնի վերա նշանակվեցաւ խիստ ցենզուրան, որ նպաստում էր անրարոյական պիէսներին Օֆենբախի գրվածների պէս: Զանազան տնտեսական չահաւէտ ձեռնարկութիւններով, բազմաթիւ պաշտօնեաներով, որք տէրութեան ծախսով էին ապրում առանց արդիւնաբերելու,—նա գրաւեց բուրժուազի առանձնված միջին դասը, ազնուական դասը գրաւվեցաւ տիտղոսներով, զօրքին հաճելի եղաւ միջոց տալով նրան պատերազմական փառքը վաստակելու, կաթոլիկ կղերին,—Հռոմի աթոռը յեղափոխականների դէմ պաշտպանելով, վերջապէս հանրապետականների համակրութիւնը գրաւեց,—Իտալիան Ավստրիայից մասամբ ազատելով ու Գարիբալդիի հետ մի և նոյն դրօշակի հովանաւորութեան տակ պատերազմելով,—թէ և վերջը որպէս վարձատրութիւն խլեց նոյն Իտալիայից Նիցցա և Սավոյա գաւառները. . .:

Արտաքին քաղաքականութեան մէջ նա ձգտում էր ռօմանական ցեղին պատկանած բոլոր ազգութիւններին պաշտպան հանդիսանալ: Այդ նպատակով էր սկսված Մէկսիկայի դժբաղդ պատերազմը, որի հետևանքը ապացուցեց որքան քիչ էր ճանաչում Նապոլէոնը Հիւսիսային Ամերիկայի ոյժը, ինչպէս որ վերջին գերմանական պատերազմի բոնապարտեան գահի համար կորստաբեր հետևանքը ապացուցեց որքան անկատար ծանօթութիւն ունէր նա Գերմանիայի զօրութեան մասին. . .:

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նոր լուր, հին գործերից: Մենք լսում ենք որ Սրբ. Ս... արք-եպիսկոպոս Զ....նի ճանապարհորդութեան երկրորդ հատորի . . . . . վերաբերեալ բոլոր նկարագրութիւնները, որ պարունակում է համարեա գրքի ութերորդ մասը,—ուրիշ մի պարոնի աչխատութիւն է, որ սրբազանի անունով տպված է և ասում են, իբր թէ այն պարոնի ազգանուան գլխատառերն են Յ. Բ. Իրաւ է արդեօք. . .:

***

Մի պարոն գրում է մեզ Շուշուց՝ „Մեր հոգևոր ուսումնարանից հարցնես, փառք Աստուծու չատ աջողակ է գնում, ամեն կիրակի օր երեխայքը սալդաթների պէս չարուած հայոց փողոցի միջով յուրախութիւն ամենեցուն գնում են եկեղեցի, լի օրերն էլ նստում են նորակառոյց ուսումնարանի մէջ լուռ ու մունջ,—միայն ձայնաւոր ասելիս բաւական զօռով են աղաղակում, որ ձայներնին հասնի մինչև հեռու տեղերը. . . : Ժողովրդից կարող եմ դանդատել որ անհոգ են, ոչ ուսումնարանի և ոչ հասարակաց գործի համար մտածել չունեն: Հոգաբարձու մոգաբարձու չը կայ,—ինն էլ ասելորդ է՝ Ես ինքս էլ մէկ ժամանակ հոգաբարձու էի (կարելի է էնց հիմիկա էլ եմ, հաստատը չեմ իմանում): Մեր ժողովուրդը միայն լաւ անմեղ բանբասանքներ գիտէ: „Արի խայտառակենք“ յօդվածիդ համար մինչև իմ հաւաքիլս որ չնորհակալութիւն գրեմ, Ղ ա դ ր-Բ է կ ը (Նոր-Նախիջևանից) առաջ ընկաւ. . . երևի բոլոր հայ հասարակութեան ս ա ղ ա կ ա ն յօդված էր. . .:

***

Լրագիրները հաղորդում են, որ Եապօնիայի կայսրը տեսնելով որ Եապօնական լեզուն աղքատ ու անմշակ է, հրամայել է որ ամբողջ երկրում, մայրենի լեզուի տեղ մտցնվի անգլիական լեզուն. . . : Որքան կաջողի այդ եապօնական նորաձևութիւնը 30 միլիոն ժողովրդի մէջ մտցնել օտար լեզուն,—ցոյց կը տայ ապագան. . .:

***

Մեզ գրում են Ն... քաղաքից՝ „Սրտով խոստովանվում եմ, որ ես երբէք յոյս չունէի, թէ „Մըչակն“ այնքան ճանաչած լինէր հայ ժողովրդի բոլոր դասերից, որ կարողանար նոցա ցանկացած լրագիր դառնալ,—տալ նոցա առողջարար կերակուր: Սա կարող է պատասխանել միւս լրագիր կամ օրագիր հրատարակիչներին և խմբագիրներին, որք զուր դանդատում են, իբր թէ հայ ժողովուրդն կարդալ չէ սիրում“. . .:

***

Գերմանական „Illustrirte Zeitung“ չաբաթագիրը հաղորդում է, որ անցեալ տարվայ սեպտեմբերի 18-ին վախճանվեցաւ Ամերիկայում տիկին Աննա Կէմբէլլ, 130 տարեկան հասակում: Նա ծագմամբ չօտլանդացի էր:

***

Ինչպէս յայտնի է Գերմանիայում ամեն տարի լինում են օրագրողների ընդհանուր ժողովներ: Մեզ գրում են Գերմանիայից որ այս 1873 թուին գերմանական օրագրութեան ընդհանուր ժողովը կը հաւաքվի Համբուրգ քաղաքի մէջ:

***

„Մեղու Հայաստանի“ լրագիրը այս տարի պահպանելով 7 ռուբլի բաժանորդութեան գինը, մի և նոյն ժամանակ մեծացրել է իր դիրքը. . . : Առաջին համարի նոր թխած ֆեյլիտոնիստը դարմանում է թէ մեր դարում հրաչքներ են գործվում: Կամայ ակամայ մենք էլ ստիպվում ենք հաւատալ հրաչքներին. . . . այդ հրաչք չէ մթթէ որ երբէք մտաւոր աչխատանքին չընտելացած մարդիկը, մարակի զօրութեամբ յանկարծ ստիպված են լինում աչխատել. . .:

***

Մեզ հաղորդում են որ այս օրերս պիտի հրատարակվի Սինտէնի մէջ պրոֆէսոր Պէտէնհօֆերի մի նոր գրվածքը „Ueber den gegenwärtigen Stand der Choierafrage“, որտեղ հեղինակը ցոյց է տալիս քօլէրայի այժմեան դրութիւնը և հետազօտում է նորա պատճառները:

***

Մի Թիֆլիսցի վաճառական ստիպված լինելով ամեն օր զիշեր ժամանակ Աղէքսանդրեան այգիով անցնել,—բռնում է մի մշակ, դնում է նրա ուսին մի թերև բեռ ու հետը մտնէ ածում. . . : Ծանօթներից մինը հարցնում է նրան այդ զարմանալի վարմունքի պատճառը: „Ինչպէս յայտնի է, գողութիւնները չատ են լինում Թիֆլիսում վերջին ժամանակներս, պատասխանում է մեր հընարագէտ վաճառականը, ու եթէ ինձ կողոպտեն, ես ապահով եմ, որ մի վկայ կունենամ ինձ համար“. . .:

**

Մեզ հաղորդումեն որ մեր անցեալ համարում տպված Շուշաւէրի բաղանիքի մասին տեղեկութիւնը ճիշդ չէ: Շուշաւէրցիք, հակառակ մեզ հաղորդած տեղեկութեան, մեծ թուով և կամաւոր կերպով յաճախումեն նոր չինած բաղանիքը, այնպէս որ բաղանիքի տերը, կալվածատէրներից մինը, իր հիմնարկութենից նիւթական օգուտ է ստանում մինչև անգամ:

**

Գանձակից հաղորդումեն մեզ, որ նորերումս մի թուրք կին ծնել է միանգամից երեք զաւակ, երկուսը կնդանի, մինը մեռած: Այս տղայաբերութիւնը նորա համար առաջինը չէ, նա մի քանի անգամել դոյգ է ծնել. . .

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

### ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Յունվարի 17-ին):

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՇԱՔԱՐ Ռուսի (Բրօցկու) . . . . | 8 | „ | 70 | „ |
| „ „ միւս տեսակը . . | 8 | „ | 50 | „ |
| „ զաղրանիցու տրանցիդ. | 5 | „ | 70 | „ |
| մաքսը վճարած . . . . . | 9 | „ | 20 | „ |
| ՂԱՀՎԱ Մօկո, չատ լաւը . . . | 16 | „ | 50 | „ |
| „ Մարտինիկոյի, ցածրը . | 14 | „ | 50 | „ |
| ՄՈՄ . . . . . | 13 | „ | 10 | „ |

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ:

(Յունվարի 5-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ռուբլի ածէ $32^3/_4$ պէնս (փոխանակ 40 պէնս):

ՓԱՐԻԶ.—մի ռուբլի ածէ 349 սանտիմ (փոխանակ 400 սանտիմ):

| | | |
|---|---|---|
| Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ | | 151 |
| երկրորդ | | $152^1/_4$ |
| 5% Բանկի տոմսակ | 1 շրջանի | 95 |
| „ „ „ | 2 շրջանի | 95 |
| „ „ „ | 3 շրջանի | — |

### ՄՕՍԿՎԱՅԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Յունվարի 5-ին)

Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ $150^3/_4$

երկրորդ 152

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ ի լոյս ելաւ „Փարոս“ վերնագրով բանասիրական դիտելեաց խմբագրի Ա. տեսարան, հրատարակեալ ի Զայրմայրայ Մսերեանց, որի և բովանդակութիւնն է. 1 Աղ:—2 Առ Մեծն Պետրոս (պատկերաւ):—3. „Նախաչափիչ Քրիստոնէական դիտելեաց, աչխ. Ս. Մանդինեանց“ (քննութիւն և դարձուած պատասխանուոյ առ Ս. Մանդինեանց:—Ս. Էջմիածնական, Արարատեան, և Երուսաղէմատիպ օրացոյցներն 1872 ամի (քննութիւն):—5. Էջմիածնական տպարանի գործունէութիւնն:—6. Ռուսերէն „Нива“ օրագիրն Վեհափառ Գէորգ Կաթողիկոսի վերայ:—7. Միքատոս (պատկերաւ):—8. Կոպերնիկոս (պատկերաւ):—9. Մկրտիչ Բէրոյեանց:—10 Նորատիպ մատեանք:

Սոյն տետրակի գինն է 50 կոպ. արծ. հանդերձ առաքմամբ: Սատանալ ցանկացողքն կարող են դիմել առ հրատարակիչն.

Въ Москву, близь Меньшиковой башни, домъ Милованова, Зармайру Мсеріанцъ.

Յունվարի 15-ից բացվում է Թիֆլիսում ԸՆԹԵՐՑԱՐԱՆ պ. Թամամշեանի քարվանսարայում: Տարեկան ստորագրութեան վճարը վաճառականների համար 3 ռուբլի է, իսկ ուշ իր ստորագրողների համար 4 ռուբլի: Ամսական վճարը ամենի համար—40 կոպէկ: 1 (3)

Дозволено Цензурою. Тифлисъ, 17 Января 1873 г. Ծերեթելի և ընկ. (նախկին Դուբէլիրի) տպարան Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի